

## ԴԱՐԱԼԱԳԵԱԶ ԿԱՄ ՎԱՅՈՑ ԶՈՐ \*)

Դարալագեազի արևելահիւսիսային կողմը գտնւում է Դնդեվազու հասարակութիւնը, որի գիւղերը զետեղուած են Թափասի-դալիկ կամ Դալիկ-թափա, Ղաջր-դաղ և Սառիեր-չալի լեռների լանջերում և նրանց միջից հոսող Արփաչայի ձախ ափերին:

Այդ հասարակութիւնը սահմանակից է Զանգեզուր և Զիւանշիր գաւառներին, որոնցից առաջնի հետ հաղորդակցութիւն ունէ երկու ճանապարհներով, որոնք ծառայում են նաև ամբողջ Դարալագեազին: Այդ ճանապարհներից մէկն անցնում է թիւրք Քոչքէկ և Թերք գիւղերի մօտով, իսկ միւսը Խափիսու և Ղուշչի գիւղերի մօտով, որոնցից առաջինը գլխաւոր ճանապարհն է և ճյեռները միշտ չէ փակւում: Զիւանշիրի գաւառի հետ հաղորդակցութիւն ունի միայն մի ճանապարհով, որը Դաշքեօրփիկց անցնում է Ղարախաչի մօտով դէպի Զիւանշիր: Այդ ճանապարհը նոյեմբեր ամսից փակւում է ձիւսով՝ մինչև ապրիլ ամսով վերջիրը:

Գնդեվազու հասարակութիւնը բաղկացած է քսան և երկու գիւղերից, որոնցից երեքը միայն հայ են, այն էլ երկու գիւղերի (Հէրնէրի և Գնդեվազու) կէս մասը թուրքիր են: Զըմեռները, երբ ձիւնը սաստիկ փակում է ճանապարհները, այդ հասարակութեան գիւղերի համարեա կէս մասը դադարում են հաղորդակցութիւն ունենալ Դարալագեազու միւս գիւղերի հետ: գարնանն էլ միայն մի փայտէ երերուն կամուրջով (Արփաչայի վրայ Մամարզայ-կշաղաղ թուրք գիւղի մօտ) հաղորդակցութիւն ունի թէ նոյն հասարակութեան միքանի գիւղերի և թէ Քէշիշ-քանդու, Ալագեազու և Ղղջայու հասարակութեան գիւղերի հետ:

\*) Տես «Մուլճ», № 10.

Թուրք գիւղերի անունները և տների թիւը ամեն-մի գիւղում:

	1886 թուի ընտան. ցուց.	այժմ		1886 թուի ընտան. ցուց.	այժմ
1 Ղոր-Խարաբար	13	ա.	17	11 Ֆէրանլու	19 ա.
2 Լէյլկազան	28	-	35	12 Գիւմուշխանայ	23 -
3 Թարփ	21	-	27	13 Գոյարաս	20 -
4 Թերփ	36	-	45	14 Բուլախլար	12 -
5 Խոտիսու	21	-	27	15 Բիյակ	56 -
6 Մամարպայ-Կշաղ	9	-	12	16 Աղջաքեանդ	14 -
7 Քոչընկ	45	-	54	17 Արինջ	21 -
8 Կիշլու	9	-	13	18 2այ-քեանդ	8 -
9 Հայալու	16	-	27	19 Գեօյարշին	4 -
10 Զիրակ	41	-	48		5

Թափասի դալիկ (գագաթնածակ) լեռան արևելեան կողմից քարակառկառներով ծածկուած սասնդխտանման ստորոտից աստիճանարար իշնում է դէպի Հէրհէր չայը, որտեղ Հէրհէր չայի աջ ափին, մի հարթավայրի վրայ դրուած է Հէրհէր գիւղը. Հէրհէր չայը կտրելով իր աջ և ձախ ափերի ժայռերը, շառաչելով ճեղքում անցնում է սեղմուած ժայռերի միջով ու իր փրփրադէզ կոհակներով անթիւ աւազանների մէջ պտոյտներ կազմելով, կենդանացնում է ձորը ու սքանչեցնում դէպի ձորը նայողին, մանաւանդ հին կոփածու քարերով շինած հոյակապ և մեծ և. Աստուածածին եկեղեցու մօտից դիտողին: Հէրհէր չայը մինչև Բուլախլար գիւղը հասնելով դուրս է գալիս սեղմուած ժայռերի միջից Արինջ գիւղի հովիտը ու միքանի վերստ հեռաւորութեան վրայ մտնում է մայր Արփաչայի գիրկը, որը նոյնպէս պատուալորել է իրան խորափոր ժայռերի պարիսազներով: Հէրհէր չայը Հէրհէր գիւղից մինչև Արփաչայն իր ծոցի մէջ տեղաւորցնում է Բուլախլար և Արինջ, իսկ գլխին Քեօթանլու և Գեօյարաս գիւղերը: Հէրհէրից դէպի արևելք նայելիս առջնիդ մի լեռան վրայից աւերակ բերդ է իր ստորոտի աւերակ աւանով և նրա շուրջը փոռւած լուռ և մամուապատ գերեզմանաքարերով, միւս առապար սարի վրայից Զիք-վանք (\*), արևմտեան կողմից Թափասի դալիկ բոլորակաձև հրաբուային լեռը, որը ըստ աւանդութեան՝ կրակի կարկուտ է թափել Մող քաղաքի գլխին և հարաւից Դարալագեազը նախիջևանից բաժանող լիւիս ու Եազիդի լեռների բարձրութիւնները:

Հէրհէրը մեզ ներկայացնում է խառնափնթոր, թրքական աներ, գետնից սակաւ բարձրացած, որը փուլ եկած, որը

\*) Սուրբ Գևորգի մատուռը:

կիսափուլ, անձեւ, վայրենի, ճիպոտներից հիւսած և կուռվ ծեփած դոներով, որոնց թէ դոնից, թէ երդեից և թէ բիւրաւոր պատառուած ծակերից բարձրանում է աթարի թանձր, խեղող և դառն ծուխը: Փողոցներում ահագին մորթէ փափախները գլխներին դրած, հագին կապոյտ զադաքէ արխալուղը, վերայից հաստ շալէ չուխան, մէջքերին կապած կամ կապոյտ չադրան կամ կաշէ գոտին, շալէ շալվարը ոտքի ճիթքերի վրայ հեսկիով (դոլաղով) փաթաթած առաջդ են ենում Հէրհէրի թուրքերը, որոնց վայրենի ծխից դեղնած ու սկցած պատեկերները, հայհոյանքը ու հասարակ խօսակցութիւնն անգամ կոռի գոռում գոչիւնի է նմանում: Այս ի՞նչ ժողովուրդ է մնացել Հէրհէրի Սիօն վանքի, Ս. Գէորգաւ մատուռի և այլ բազմաթիւ սքանչելի նրբարանդակ հնութիւնների կերառդներից յետոյ: Այդտեղ, այդ թուրքը խուժանի մէջ, աչքիդ ընկնում են հայերը իրանց թշուառ, ողորմելի և ճնշուած պատեկերներով, որոնց առաջին ակնարկը զգալ է տալիս քեզ, թէ սրանք, բանութեան գոհերը, իրանց վիճակից ու դրութիւնից գանգատ ունին քեզ, որոնք կազմում են 1886 թ. ընտանեկան ցուցակով 50 տուն, այժմ 80 տուն: Հէրհէրի հայերը թափուած փշրանքներն են—աւելցուկը Զանգեզուր զաւակի Ալիշու գիւղի բնակիչների և Նախիջևանի զաւարի Զահրի գիւղի: Հէրհէրում վարելահողերը մինչև այժմ չէ բաժանուած հոգու վրայ, այլ ում ձեռքն ինչ քանակութեամբ հող է ընկեր, այնպէս էլ մնում է յետագաների ձեռքում: Բոլոր վարելահողերը անջուր են և երաշտ տարիները սպառնում են բնակիչներին քաղցուկ: Բերրի հողը 1—5 արդինք է տալիս: Վարելահողերի լու մասը, արօտատեղիների և պարտէզների ընտիր տեղերը պատկանում են թուրքերին: Մի խօսքով այստեղ ինչ որ լաւ է և գեղեցիկ թուրքերին է պատկանում: Հայերի թիւը թէ արական և թէ իգականը միասին կազմում են 610 հոգի:

Գիւղի արևելահիւսային կողմը, Գեօյդաղ լեռը և նրա շարունակութիւնները ծածկուած են կաղնիի և այլ ծառերի անառաներով, որոնք ենթարկուած են բնակիչների անխնայ աւերմունքին անպէս, որ այն ամբողջ Դարալազեազին արդուջների գերաններ շնորհող անտառները, չ'ունին այժմ հասարակ շինութիւնների համար ցանկալի փայտը: Հէրհէր զիւղի թուրքերը սարսափելի կերպով հարստահարում են հայերին, գողանալով նոցա անասունները և բոլոր եղած-չեղածը, մինչև անգամ հնում տանում են ցանքերը, նաև հնածած ցորնի ու գարու գէզերը: Մի ժամանակ հնարել էին մի միջոց հայերի տները կողոպտելու, այն է՝ երկար ձողերի գլխին երկաթէ կե-

ուր ամրացրած, գիշերները այդ ձողերը երդիքներից ներս էին կոխում տան մէջ և եղած-չեղածը այստեղից դուրս քաշում Այդ անտանելի դրութիւնից ազատուելու համար, հայերը, 1902 թուին, համախօսական կազմեցին, իրանց մէջ ընդունելու պոլիցիական ստրաժնիկներ, պարտաւորուելով շինել նոցա համար յարմար կեցարան և ներկայացրեցին տեղական վարչութեանը, որը ընդունելով նշանակեց նոյն թուից Հէրհէրում ստրաժնիկների պոստ և այդ ժամանակից ի վեր սանձահարուած են թիւրբերը: Չնայելով այդ տնտեսական անյաջող պայմաններին, Հէրհէրի հայերը այսուամենայնիւ համեմատաբար մաքուր և վայելուչ կեցութիւն ու բնակարաններ ունին քան թէ թուրբերը և օրէցօր բարեփոխում են իրանց դրութիւնը, իբրև խաղաղ և երկրագործ ժողովուրդ: Այս բանում նոցա օգնում են այն հէրհէրցի ժիր մշակները համբալները, որոնք համէտները շալակներին, Բագուի և Տփիսիսի մէջ ճակատներից զնգուռ-զնգուռ թափած բրտինքը սրբելով, կոպէկ-կոպէկի կցելով, ստէպ-ստէպ գումարներ են ուղարկում իրանց կարօտեալ ընտանիքներին: Հէրհէրցիք ունին 8 ջրաղաց, 3 խանութ (մեծ մասը թիւրբերի ձեռքը):

Արևելեան կողմից Ղազր-դաղը, արևմտեան կողմից Գեօյդաղը, հիւսիսից Եանդ-բաշի (Սառիեր-սերչալու լեռան ճիւղերից մէկը) կազմում են Արփաչայի ձախ ափին, հիւսիսից դէպի հարաւ տարածութեամբ մի կանաչ հովիտ, որի վրայ դրուած է Ղուշչի գիւղը: Այս գիւղը հիմնուած է սրանից 45 տարի առաջ, որը 1886 թ. ընտանեկան ցուցակով կազմում է 53 տուն, իսկ այժմ 90 տուն: Բնակիչների թիւը 788 հոգի են, որոնցից 412 արական են, իսկ 376 իգական: Ղուշչեցիները գաղթել են Զանգեզուր գաւառից և Նախիջևանի գաւառի Զարբերդ գիւղից: Ղուշչին գտնուումէ Դարալազեազի և Զանգեզուրի գաւառների սահմանագծի վրայ, որի մօտով ամառները Ղարաբաղի թափառականները գալիս են բնակւու Դարալազեազու հիւսային լեռների վրայ, այդ ճանապարհը կոչում է Արխաշանի ճանապարհը: Բացի այդ, այդ գիւղի մօտովն է անցնում միակ ճանապարհ՝ դէպի Նախիջևանու գաւառը, որով Զիրակ, Բիլակ, Խստիսու և Զէյրանլու թուրք գիւղերը Դարալազեազի ու Ղարաբաղից եկած թախառականների քարվաններն անցնում են Նախիջևանու գաւառը աղ և այլ պիտոյքներ գնելու համար: Մայիսի մէկից սկսած մինչև սեպտեմբերի 10-ը, Ղուշչին կազմում է մի հիւսակի տեսարան, մանաւանդ նորա կանաչ, ծաղկաւէտ, անտառապատ և թարմ լեռները, հովիսներն ու ձո-

բերը որոնց կատարեալ հոգի է տալիս Արփաչայն իր սառ-  
նորակ ջրով։

Սքանչելի է Ղուշչին մանաւանդ երբ քամին օրօրում է հո-  
վիտների բարձրացած խոտն ու եղեգը, որոնք ծփում են ծովի  
ալիքների նման Մի բան այդ բոլորի համունոտը նսեմացնում  
է այն է՝ ամառները Ղոր լեռան (արևելեան կողմից) կրծքից  
շարունակ փչում է պարրերական ցուրտ հողմը, ձանձրացնե-  
լով թէ ղուշեցուն և թէ Ղուշին յաճախողին։ Այդ գիւղը երկը-  
լրազործութեան համար այնքան էլ առաւելութիւն չունէ, իբրև  
լեռնային գիւղ։ Այստեղ ցանքն սկսում է մայիսի մէկից մինչև  
յունիսի երեքը, ուստի բոլոր ցանքերը գարնանացան են, որով-  
հետև աշնանացանը երկարատև ձիւնի տակ փչանում է։ Վա-  
րելահողը սակաւ է և բաւարար չէ ղուշեցոց համար, որը ու-  
ժից ընկել է երկար և շարունակ ցանելու պատճառաւ և մէկին  
չորս արդիւնք տալով, չէ բաւականացնում բնակիչներին, ուս-  
տի 90 տանից 10 տուն միայն հացը ծախ չեն առնում, այս  
պատճառաւ ստիպուած են վարել ու ցանել Զիրակ, Բիլակ և  
Զէյրանլու թիւրը գիւղերի հողմը կիսարար։ 15 տուն բանուոր  
անասուններ չունին, մեծ մասը աղքատ են և տասն տուն մի-  
այն պարտքեր չունին, ամբողջ գիւղում երեք տներ կան, ո-  
րոնք ունին 1000—1500 բուք. դրամազլուխ։ Ղուշիուս կան  
երեք ճոթի և մէկ մանրունքի խանութներ, 12 ջրաղաց և մի  
ձիթահանք։ Զմեռները շատ անգամ երբ ձիւնը շատ է, Ղուշիի  
հաղորդակցութիւնն ընդհատում է ուրիշ գիւղերի հետ։ Ամառը  
կենդանանում է հանքային ջրերին յաճախողների, թափառա-  
կանների և ճանապարհորդների անցուղարձով, կեանքը եռում  
է համեմատելով միւս գիւղերի հետ և առևտուրը կենդանանում։  
Ղուշեցիներն ընդհարուելով թափառականների քաջ ցե-  
ղերի հետ և սպասելով նոցա ասպատակութեանը, իւրացը-  
րել են ինքնապաշտպանութեան և քաջութեան հոգին, օ-  
րինակ առնելով ըստ մեծի մասին հարևան Զանգեզուր գա-  
ւառի Բազարչայի մալականներից, որոնք գտնուում են 25  
վերստ հեռաւորութեան վրայ Ղուշիից։ Շրջապատուած լինե-  
լով թուրք տարրով, որոնց գլխաւոր պարապմունքը գողու-  
թիւնն է, միքանի երիտասարդներ գերազանցում են թուրքե-  
րից իրանց գողութեամբ անցնելով միւս գաւառները ձիեր և  
այլ ապրանքներ թոցնելու։ Ղուշեցիների տնտեսական գրու-  
թեանը քայլայող հարուած տուեց նորանց «Բէյուք-գիւնէյ» ա-  
նուաննեալ հողը 200 դեսետին տարածութեամբ, որը Ղուշիի  
երկարատև—եօթնամեայ ձմեռն անցնելուց յետոյ առաջին արօ-  
տատեղն էր ներկայացնում նրանց անասունների համար և

միևնոյն ժամանակ ամենաբերրի վարելահողը, բայց դժբախտաբար այդ հողը անտառապահ կ.-ի օրից մինչև այժմ եղել է կըռուածաղիկ անտառապահների և ղուշեցոց մէջ, որի ձեռք բերելու համար ղուշեցիները քանի հաղարներ են մախել, բայց մինչև օրս չեն կարողացել խել անտառապահների ճանկից այդ իրանց անհրաժեշտ հացի խնդիր կազմող թշութ-գիւնէյը, չնայելով իրանց բոլոր ջանքերին ու մաքառումներին, Ղուշեցոց թոյլ և տարտամ դրութիւնից պակաս չեն օդուում և նրա իրաւունքները դէպի չարը գործ դնում զանազան օքեպչիկները և շինական պաշտօնակատարները: Ղուշիից մեծ քանակութեամբ երիտասարդներ գնում են բագու և այնտեղ զանազան տեսակ մշակութիւններ անելով, բաւական գումարներ են ուղարկում հայրենիք, որտեղ նրանց տան մնացող անդամները բարութքում են իրանց տնտեսական դրութիւնը: Շարուը կալուածէր Շանգիրէյը Զանգեզուր գաւառի սահմանագլխից նոյն դաւառի Բաղարչայ գետից վերցրել է մի առու տասն վերս հեռաւորութեամբ Ղուշիից, որը Ղուշի գիւղից փոքր ինչ ներքեւ խառնուում է Արփաչային:

Դիւղի միջում կայ մի հին և աւերակ եկեղեցի, որի շուրջ սփոռուած են գերեզմանաքարեր իրանց հին գեղեցկաքանդակ նկարներով և միքանի մեծ և կանգուն խաչքարեր յիշատակարանների նման: Դիւղի միջի ժայռից հոսում է հիանալի հանքային թթու ջուր: Ղուշիից չորս վերսա հեռաւորութեամբ դէպի հիւսիս, Արփաչայի աջ և ձախ ափերին, գտնուում են հանքային աղբիւրները, աջ կողմի աղբիւրը գտնուում է ։/։ վերսա հեռաւորութեամբ ափից, այն վատակի ափին, որը թափուելով Արփաչայում ժայռերից կազմում է մի կախարդական ջրվէժ, իսկ ձախ կողմին գտնուում է ուղղակի ափի մօտ: Սրանք նշանակութիւն են ստացել Դարալագեազի մորիօվ (γ-պատկօվայ զաւելած) պ. Խանաղեանցի օրով, որը առաջինն է եղել, որ կառուցել է աղբիւրներից մէկի վրայ մի քարաշէն տնակ 1863 թուին. այժմ այդ տնակից պատերն են մնում միայն: Այդ ժամանակ աւելի հոչակաւոր են եղել ոչ թէ այժմեան Արփաչայի ձախ ափին գտնուած աղբիւրները, այլ աջ կողմը արևմտեան սարի մօտ գտնուածը, որին լեռան կողը փուլ գալով ծածկել է և որի միայն հետքն է երևում: Այժմ գլխաւոր տեղը բռնում են Արփաչայի ձախ ափին գտնուած աղբիւրները, որոնք դժբախտաբար չունեն մաքուր աւաղաններ, այլ աղբիւրների աչքերը 2—3 տեղ քանդել են ջրհորներ կազմել, որոնց մէջ լողանում են յաճախողները: Սրանցից մինն ունի 29°, իսկ սիւները 36—40° ըստ Ռ. աստիճանի ջերմութիւն: Նոյեմբերի, 1904.

Լողացողները թէ գիշեր և թէ ցերեկ բացօդեայ են անցկացը-նում: Որոնք ունենոր են, հարևան գիւղերից վրաններ են բերել տալիս, որոնք չունենոր են, լողանալուց յետոյ պառկում են խո-նաւ գետնի վրայ, եթէ գիշերներն էլ անձրև կամ կարկուտ տեղաց, խոս խսպառ կորած են ողորմելիները: Այսպիսով այ-ցելուները, փոխանակ բժշկութիւն ստանալու, շատ անգամ ա-ւելի վատ հիւանդութիւն են ստանում ու հետանում: Լողանա-լու ժամանակն էլ ընաւ կարգուկանոն չկայ, ով որ զօրեղ է, կարծիք չկայ, որ հերթը նրանն է, թէ ուշ լինի եկած: Պ. Խա-նաղեանցից յետոյ տեղական վարչութեան կողմից այդ մասին ուշադրութիւն դարձնող ու հոգ տանող չէ եղել, միքանի ան-գամ ինդիրներ են առաջարկել զուշեցի հայերը, որ թոյլատրուի այստեղ իրանց շինութիւններ և այլ յարմարութիւններ հաս-տատել, բայց մերժումն են ստացել: Զերմուկներից 100—150 քայլ դէպի հարաւ ժայռի ափին, բղխում է նոյնպէս մի պա-տուական հանքային թթու ջուր:

Գնդեվազ գիւղը գտնւում է Ղարդաղ լեռան և Արփաչայի մէջտեղում զետեղուած հիւսիսից դէպի հարաւ տարածուող սարահարթի վրայ, այստեղ, որտեղից իջնում է մի ոլոր-մոլոր զառիվայր ճանապարհ դէպի խոր ձորի միջով որոտացող Ար-փաչայն, դէպի Գնդեվազ կամ Կնդեվան հոյակապ վանքը: Գնդեվազի սարահարթը տարածում է Արփաչայի ուղղութեամբ՝ մինչև Զայքեանդ գիւղը, այստեղ, ուր Զուլչայը խառնում է Արփաչային, այդ իսկ սարահարթի վրայ, մի ծոցաձև փոսի մէջ՝ ամփոփելով թուրք Կլիչլու գիւղը: Թանի գնում է դէպի հարաւ, սարահարթը ցածրանում է: Ամբողջ սարահարթը սկսած Ղուշիի և Գնդեվազ գիւղերից կտրում է հիւսի-սից դէպի հարաւ ուղղութեամբ հարաւային Դարալագեա-զի կամ Նախիջևանու ճանապարհը, որը ամառնային ժա-մանակ կենդանանում է թափառականների և Գնդեվազու հասարակութեան գիւղերից Նախիջևանայ աղահանքը զնացող-ների կարաւաններով: Գնդեվազու դաշտերը, զլաւառապէս հէնց այդ սարահարթը մերկ ու քարոտ են, ուստի այնքան կանաչ և գրաւիչ չեն, ինչպէս Ղուշիի դաշտերը, բայց դրա փոխարէն հիանալի է սրտաբաց տեսարանները, երբ նայում են դէպի հարաւ Գնդեվազու բարձր գիրքերից, հայելուոյ նը-ման ցոյց է տալիս քեզ Դարալագեազու հարաւային լեռների կուրծքն ու սիրտը: Աւելի հիանալի և վեհափառ տեսարան է կազմում այն ժամանակ, երբ կանգնած գիւղի ծայրին, ժայռի

գլուխց նայում ես հիւսիսից դէպի հարաւ խոր ձորի միջով հոսող, շառաչող արծաթափրփուր Արփաչային, որը դարերի ընթացքում կտրել է հակայ ժայռերի կուրծքը և ամփոփուել է ամենի վիշապինման հովասուն թաւուտների մէջ և անտառապատ, կանաչ և թարմ Գեօյդաղ լեռանը: Գնդեվազ գիւղը բաղկացած է հայ և թուրք տարրերից, որոնք 1886 թուի ընտանեկան ցուցակով կազմում են 59 տուն, այժմ 67 տուն: Գնդեվազի հայերը գալթել են այստեղ 1866—1867 թուերին Դարալազեապի Խաչիդ և Գնիշիկ գիւղերից, երկու տուն միայն Թեշիշքեանսդից են եկել: Բնակիչների թիւը ընդամենն 727 հոգի է, որոնցից 379 հոգի արական են, իսկ 348 հոգին իգական:

Այդ գիւղը անձրևային տարիները բաւականին առատ և յաքուր հաց էր տալիս, իսկ փոքր ինչ երաշտ տարիները են՝ թարկում էր գիւղացիներին անմիջիթար վիճակի, բայց խոհեմ գնդեվազցիները սքանչելի կերպով փրկուեցին այդ դրութիւնից շնորհիւ իրա միքանի պատուական երիտասարդների, որոնք սրանից վեց տարի առաջ 2000 րուբլի հաւաքելով, գիւղից մի առու վերցրեցին Զանգեզուր գաւառի Բազարչայ գետից և այդ ջուրը 25 վերծու տարածութեան վրայ անցկացնելով բերեցին երանց գիւղի բոլոր անջրդի հողերը դարձրեցին ջրային, որով կենդանացրեցին գիւղի տարսամ դրութիւնը, առատապէս ոռոգելով նրա դաշտ ու լեռը: Տացի սրանից, գնդեվազցիները ահա գին նեղութիւնով իջնում էին գիւղի արևմտեան կողմի զարիվայր ճանապարհներով մի վիրսու հեռաւորութեամբ Գնդավան վանքի ձորը և ժայռի տակից թափուող աղբիւրներից ահագին գծուարութեամբ ուսերի վրայ կամ զրաստներով խմելու ջուր էին հանում դէպի վերև—գիւղը, միևնոյն տեղը քշում էին իրանց անսառնները ջուր խմելու: Միքանի անգամ այդ ժայռերից թափել են անցնողների զիմին ու մահացրել թէ անտառներին և թէ մարդկանց: Սակայն միևնոյն երիտասարդները այդ ցաւի առաջն էլ առեցին 1900 րուբլի գումար հաւաքելով գիւղից, մի պատուական աղբիւրի ջուր բերեցին գիւղը հինգ վերսու հեռաւորութեան վրայ, որով գիւղը դրեցին մի նախանձելի վիճակի մէջ: Այժմ այդ առաւ ջրերով նրանք կարող են առուոյտի խոտանոցներով և ծառաստաններով աղատօրէն ծածկել իրանց լերկ գաշտերը: Զնայելով հայերի թախանձանքին, Գնդեվազու թուրքերը երբէք չմասնակցեցին հայերի կատարած ծախքերին:

Գնդեվազը կազմում է Գնդեվազու շինական հասարակութեան կենտրոնը, որի համար էլ շինական կառավարութիւնն այստեղ է շինուած: Հասարակական վճիռ են կայացրել ամբողջ

հասարակութիւնով և ներկայացրել ըստ պատկանելոյն այս-  
տեղ միջասեան արքունական ուսումնարան բացելու: Մի  
խօսքով այդ գիւղը կենդանանում ծաղկում է օրըստօրէ: Բնապ-  
կիչները հիւրասէր, բարի և երկրագործ մարդիկ են: Ունին  
մի քահանայ, հոյակապ հին քարաշէն եկեղեցի և. Աստուածա-  
ծին անունով: Բնակիչների գլխաւոր պարապմունքը երկրագոր-  
ծութիւնն է: Նիւթապէս ապահով վիճակի մէջ են, պարտքեր  
չունին, սակայն խոշոր դրամագլխի տէրեր էլ չունին, երեք-չորս  
տասներ ունին 100—600 ըուբլի դրամագլուխ Խնչպէս Հէրհէրում  
տիրող դասակարգը կազմում են թուրքերը, նոյնպէս էլ այս-  
տեղ կազմում են հայերը, բայց ոչ թէ Հէրհէրի թուրքերի նը-  
ման բռնի, ոյժի զօրութեամբ, այլ խաղաղ, կուլ' տուրական ձեռով:  
Գնդեվազգիք ունին մի ճոթեղէն ապրանքի և մի մանրունքի  
խանութներ, եօթն ջրաղաց և մի ճիթահանք: Կանայք լաւ  
գորգեր ու կապերտներ են գործում: Լաւ գորգը ծախտում է  
այստեղ 30—37 ըուբլի, իսկ լաւ կապերտը 14—16 ըուբլի:  
Վեց-եօթ տուն մեղուներ էլ են պահում ամենմէկը չորս հինգ  
փեթակ: Անասնապահութիւնը առաւելութիւն չէ կազմում  
միւս հայ գիւղերից այնպէս, որ 100-ից աւելի ոչխար և 25  
աւելի տաւար պահողներ չկան: Անասնապահութիւնը այստեղ,  
նաև Ղուշչիում շատ անգամ ենթարկում է գողութեան վտան-  
գին թուրքերի կողմից: Գիւղից ներքև ձորի մէջ, Արփաչայի  
ափին Գնդավան վանքի շրջապատը, բաւական տեղ տարածու-  
թեան վրայ զննեվազգիք ունին այգիներ ծիրանի ծառերով  
պատած: Շնորհիւ այդ գիւղի կլիմային այստեղ մարդիկ երկար  
ապրում են, բաւականին ծերեր ու պառաւներ կան զառամեալ  
ծերութեան հասած, նոյնպէս էլ Ղուշչիում:

Մի քանի երիտասարդներ բերել են գրամմօֆոն ու նո-  
րանոր հնչում են նրանց ականջին «Կոռոնկ ուստի կու գաս»  
«Ծիծենակ» և այլ ազգային երգեր: Գնդեվազ գիւղից բացակա-  
յողներ քիչ կան:

Հէրհէրցիք բացակարում են անճարացած իրանց վարելա-  
հողերի սակաւութիւնից, իսկ դուշչեցիք ոչ այնքան կարիքից,  
որքան սովորութիւնից ու հարստանալու ցանկութիւնից: Այդ  
գիւղերից բացակայողները Ռուսաստան չեն անցնում, այլ մը-  
նում են Բագու և Տփիխ քաղաքներում, որտեղ նրանք կամ  
համբարութեամբ են պարապում կամ դառնում են խոհարար,  
ծառայ (լակեն) կամ պահապան (ՃՈՐՆԻԿԵ): Հայրենիք վերա-  
դարձողների մէջ դեռևս սիֆիլիս հիւանդութիւնն չէնկատուած,  
ինչպէս Մարտիրոսաց հասարակութեան հայերի մէջ: Եթէ այդ  
տարագրողների մէջ վերադառնալիս երևում են հիւանդութիւն-

Ներ, այդու թէ ախտերի սև կնիքն է նրանց վրայ դրօշմել, այլ բեռների ծանրութիւնն է յառաջացրել, այն բեռների, ուրոնք նրանք կրում են իրանց ուսերի վրայ Բագուի և Տփխիսի շուկաներում, Հէրհէրցի հայերի կէսը խօսում են պարսկահայոց—Ատրպատականի բարբառով, կէսը զանգեղուցոց ալիւեցոց բարբառով՝ իսկ երկուսը իրար խառնուելով, մի կոշտ ոճ են փոխադրում: Ղուշչեցիք և գնդեվազգիք խօսում են հին հայի լեզուով, որ շատ նման է այրարատեան բարբառին, հին հայ էլ կոչում են նրա համար, որ Դարալազեազի հայերի Ատրպատականից գաղթելուց առաջ, նրանք բնակուելիս են եղել Դարալազեազում: Հէրհէր գիւղը գտնուում է Քեշիշքեանդից (участковое управление) 30 վերստ հեռաւորութեան վրայ, Ղուշին 50 վերստ և Գնդեվազը 42 վերստ:

Մ. Տ.-Ա.

(Կը շարունակուի)